

## Ազգագրություն և բանահյուսություն Արցախյան ժողովրդական խաղիկները և նրանց լեզվական արվեստը

Ա. Յու. Մարգարյան

*Հոդվածում վերլուծվում են արցախյան ժողովրդական խաղիկների գաղափարական բովանդակությունը և լեզվական արվեստը: Հոդորդյալների համար բերվում են համադաստասխան օրինակներ:*

Արցախյան բանահյուսությունը շուրջ 150 տարվա պատմություն ունի, և այդ պատմության ընթացքում հավաքագրված ժողովրդական տարբեր ժանրերի ստեղծագործությունների մեջ իրենց ուրույն տեղն ունեն ժողովրդական խաղիկները:

Ժողովրդական խաղիկների գրառումը սկսվում է բանահյուսական մյուս ժանրերի նմուշների գրառմանը զուգընթաց: Այս բնագավառում առաջին փորձերը կատարում են հայ մշակույթի պատմության նրախտավորներ Առաքել, Ալեքսանդր և Գրիգոր Բահաթյանները, որոնք 1860 թ. մայիս-օգոստոս ամիսներին Շուշի քաղաքում տեղի և հարևան գյուղերի բնակիչներից հեքիաթների, գրույցների, անեկդոտների հետ հավաքագրում են նաև խաղիկներ: Արձագանքելով նրիտասարդ բանահավաք-հրատարակիչ Տիգրան Նավասարդյանի կոչին՝ Առաքել Բահաթյանը 1881 թ. նրան է հանձնում այդ գրառումները:

Նավասարդյանի կոչին արձագանքում է նաև Շուշու թեմական դպրոցի շրջանավարտ, Նոր շեն գյուղի ուսուցիչ Միքայել Տեր-Հովհաննիսյանը, որը 1881 թ. փետրվար-մայիս ամիսներին գրի է առնում մի շարք խաղերգեր, մանկական երգեր, անեծք-օրհնանքներ, առած-ասածվածքներ, արագախոսություններ, հանելուկներ, երգեր, հեքիաթներ, որոնց մի մասը հրատարակվում է Տ.Նավասարդյանի կողմից, իսկ մնացածը առ այսօր պահվում է նրա ֆոնդում:

Այս շրջանում բանահավաքչական լայն գործունեություն են ծավալում նաև Մակար Բարխուդարյանը և Լյուստանտին Մելիք-Շահնագարյանը (Տմբալի խաչան), որոնք, սակայն, առանձնակի ուշադրություն չեն դարձնում ժողովրդական խաղիկներին:

Բանահավաքչական գործի խթանման կարևոր միջոց հանդիսացավ Շուշիում «Ազգագրական հանդես» պարբերականի հիմնադրումը, որտեղ տպագրվեցին գանազան ժանրերի նյութեր, այդ թվում և խաղիկներ:

1895 թ. «Արարատ» ամսագրի էջերում լույս է տեսնում «Ղարաբաղի քրոսիկայ երգերից» խորագրով մի փունջ, որի հեղինակն էր խաչիկ վրդ.Ղադյանը Վերին Թաղավարդ գյուղից: Նույն հեղինակը Ա.Ղադյանի հետ 1908-1910 թթ

»Ազգագրական հանդեսում« տպագրվում է 1885-1893 թթ «Պարանդայի տարբեր գյուղերում գրառած խաղիկներ: Ղետք է ասել, որ այս բանահավաքները քաջատեսակ էին բարբառին, ժողովրդի կյանքին ու կենցաղին և իրենց գրառումների վերջում ներկայացրել են նաև բարբառային բացատրություններ և ծանոթագրություններ:

Ի թիվս այլ ժանրերի, ժողովրդական երգեր ու խաղիկներ է գրի առել ծննդով Վարաճայանի Նախիջևանի գյուղից Մարգիս Խարալյանը, որի մի մասը հրատարակվել է տարբեր ժողովածուներում, իսկ մի մասն էլ անտիպ է:

Արցախյան ժողովրդական խաղիկների հավաքագրման գործում անուրանալի է Մարգարիտ Գրիգորյան-Սպանդարյանի դերը, որի հավաքագրած նյութը՝ թվով 1804 խաղիկ, ազգագրվեց ազգագրության և հնագիտության ինստիտուտի իրատարակված «Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը» ժողովածուում:

Ժողովրդական երգեր ու խաղիկներ են ընդգրկված նաև «Նմուշներ Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունից» (Ե., 1978 թ., Մ.Առաքելյան, Ռ.Ղահրամանյան), «Հայ ազգագրություն և բանահյուսություն» (հ. 15, Ե., 1983, Ա.Լազիկյան), «Նշխարներ Արցախի բանահյուսության» (Ե., 1991, Լ.Հարությունյան) ժողովածուներում:

Թվով 28 խաղիկ է գրառել Արտեմ Բաբայանը, որ գետնոված է նրա «Վարանդայի բարբառը» անտիպ աշխատության հավելվածում:

Մեր կողմից արձանագրվել է շուրջ 45 խաղիկ, որոնց մի մասը կրում է երգիծական բնույթ:

Այսբանով հանդերձ, պետք է ասել, որ ընդհանուր առմամբ քնարական բանահյուսությունը Արցախի աշխարհային իրականության մեջ այնքան էլ զարգացած չէ և ներկայումս, կարելի է ասել, գտնվում է անհետացման եզրին:

Արցախյան ժողովրդական խաղիկները հիմնականում քառատող յիբիկական երգեր են հորինված հոգեկան տարբեր վիճակների և հասարակական բազմազան երևույթների անմիջական ազդեցության տակ, որոնցից ամեն մեկը արտահայտում է մի ամբողջական միտք. տրամադրություն և ունի հանգավոր և գեղարվեստորեն ավարտուն կառուցվածք:

Դրանց մեծամասնությունը վիճակի երգեր (ջանգյուլումներ) են, որոնք ներկայացնում են նրիտասարդ սիրահարների ներքին ապրումները, և որոնք երգվել են հալածարձման տոնին վիճակախաղերի ժամանակ:

Ահա թե ինչպես է նկարագրում Մ.Գրիգորյանը այդ գործընթացը.

- Մի օր առաջ յիբիկները ծաղիկներ են քաղում, ծաղիկփնջեր կազմում, բերում վիճակախաղի համար:

Կավե պուլիկի մեջ աղբյուրներից հավաքած ջուր են ծածում, ծաղիկները մեղք դնում: Այնուհետև

տվյալ խմբից ամեն մեկը գաղտնի կներգրվի որևէ իր է գցում կճուճի մեջ: Դրանք լինում են արծաթե կամ պողպատե մատանիներ, թորոցներ, մատնոց, կոճակ, ուլունք և նման բաներ: Երբեմն իրենց ազապ կղայրների համար էլ են որևէ իր գցում:

...Վեց-յոթ տարեկան մի փոքրիկ ու գեղեցիկ աղջկա ճերմակ մետաքսն շորեր են հագցնում, գլխին ճերմակ շղարշ են գցում ու տանում վիճակախաղի տեղը: Կնոճը դնում են նրա ասաց այնպես, որ նրա ձեռքը հասնի մինչև հատակը, որ կարողանա՜ն հանել մեկ-մեկ կճուճի մեջ գցած մանր իրերը:

Սկսում են վիճակախաղի ջանգլուումներ երգել: Ամենից առաջ խմբովին երգում են ջանգլուումների սկզբնամերը: Մենեղում է ամենից ավելի լավ ծայն ունեցող աղջիկը: Ամեն մի տողից հետո խումբը երգում է կրկնակ տողերը՝ »Ջան գլուում, ջան, ջան, ջան ծաղիկ, ջան, ջան«:

|                               |        |
|-------------------------------|--------|
| Մենեղ - Ի մ ծաղեգ՛ըս քաղած ա, | Պէցուր |
| սարեն կ'ը՛ղած ա,              |        |
| Ջան գլուում, ջան, ջան,        | Ջան    |
| ծաղեգ՛, ջան, ջան:             |        |

Այս ձևով երգելը շարունակվում է, մինչև հանում են կճուճի միջի վերջին իրը: Ամեն ջանգլուումից հետո ճերմակագեցնտ շորով աղջիկը, որի երեսը ծածկված է ճերմակ շղարշով, ձեռքը տանում է կճուճի մեջ ու մի որևէ իր հանում: Հանած իրն ում պատկանում է, ասված ջանգլուումի բովանդակությունն ու էությունը նրան է վերաբերում, լավ, թե վատ, ուրախ, թե տխուր, ահա թե ինչու աղջիկները սովորաբար երգում են ուրախ բովանդակությամբ երգեր: Ջանգլուումները հիմնականում հորինում են հանպատաստից, հենց տեղն ու տեղը, որոնք անմիջապես մասնաջականանում են:

Խմբի շնորհքով աղջիկներից կամ հարսներից ումանք հորինում են իրենց ընկերուհիների կյանքից, իղձերից, մութագներից, կարտոից, զբաղմունքից, տնտեսական վիճակից, սիրո պատմությունից ելնելով՝ դրանք կապելով ժամանակաշրջանի, տիեզղ կարգերի, ծննդի, աղաթների, մայրական սիրո, պանդխտության, բռնության, աշխատանքի, բնության, հայրենի օրրանի և այլ հավաքողությունների հետ:

Այնուհետև, երբ սպառվում են կճուճի մեջ եղած իրերը, սկսում են խոսել, ծիծաղել, սիրտ տալ և ուրախացնել այն աղջիկներին, որոնց վիճակը վատ է դուրս եկել: Նրանք այդ ընդհանուր ուրախության մեջ շուտով մոռանում են իրեն վիշտը: Վիճակախաղից հետո սկսում է ճաշկերությունը, որին հետևում էին երաժշտությունն ու պարերը՝ տղաների մասնակցությամբ:

Մակայն նոր երգերի հետ երգում էին նաև հենըր,նախօրոք սովորածները: Նույն Մ Գրիգորյանի

վկայությամբ իրենց թաղի աղջիկներին ջանգլուումներ էր սովորեցնում շուշնցի բանասաց Ղումաշ Ավագյանը, որը դրանք հորինում էր՝ համապատասխան այդ աղջիկների ու հարսների սրտի գաղտնիքներին, սոցիալական դրությանը, արտաքին գեղեցկությանը, հոգու ու սրտի ապրումներին ու ձգտումներին:

Բազմաթիվ հին և իրենց կողմից հորինված վիճակի երգեր գիտենի հանում Արզանգույանը (Թաղավարդ), Թամար Բաղդասարյանը (Ջրակուս), Եղսան Բաջին (Շեխեր), Ջաղալար Բաջին (Շուշի), Ջուբրուտ բաջին (Շեխեր), Օսաննա բաջին (Շուշիքենդ), Մովսիսար բաջին (Հաջի), Հերիքյանազ բաջին (Հաղոսի վանք), Մանիշակ բաջին (Հերիք), Մաշինակ բաջին (Շուշի), Մարգարիտ բաջին (Ներքին Սգներ), Մարյան բաջին (Շուշի), Մինա բաջին (Չանախչի), Արշալույս Մնացականյանը (Շուշի), Նանուր բաջին (Շուշի), Ջաղարդ Չիխնգարյանը (Շուշի), Սաթենիկ բաջին (Շուշի), Սալի բաջին (Շուշի), Վարենիկ Սարգսյանը (Շուշի), Սոնա բիբին (Ասկերան), Սոնա հասին (Հաղոսի), Սոնիշկա բաջին (Շուշի), Հնրեյկա Սոնիանյանը (Շուշի), Հեղինե Սիմոնյանը (Շուշի), Փեղորն բաջին (Շուշի):

Ինչպես երևում է բանահավաքների ծանոթագրություններից, ջանգլուումներ հորինել են միայն կանայք, քանի որ տղաներին արգելվում էր մասնակցելու վիճակախաղին:

Բազմազան են արցախյան խաղիկներում արծարծված թեմաները՝ սեր, հայրենիք, պանդխտություն, բնություն, սոցիալական խնդիրներ, աշխատանք և այլն:

Արցախյան ժողովրդական խաղիկները գերազանցապես սիրո երգեր են, որոնք արտահայտում են երիտասարդ աղջիկների ու տղաների, հարս ու փեսաների, երբեմն էլ ամուսինների սիրո զգացմունքն իր տարբեր նրբերանգներով: Դրանցում գտնում ենք սիրային բազմազան մոտիվներ: Մի շարք երգեր նվիրված են յարի գովքին, որ ասվում են աղջկա կամ տղայի կողմից: Գովվում են աղջկա չինար բոյը, ալագոզ աչքերը, քաղոք լնզուն, շնկ ու թուխ մազերը, ծամերը, շամամ ծծերը, հագուստը, քայլվածքը, տղայի բոյն ու բուսաթը, ուժը, բեղերը, քաբյուրը:

|                         |            |
|-------------------------|------------|
| Էտ վարար վը՛նկի մազըտ,  | Ծով        |
| աշկերիտ, վարթը պըռըշիտ, |            |
| Անիմ իմ սըրտիս սազը,    | Տամ սըրտիս |
| մոխամամազը:             |            |

|                       |          |
|-----------------------|----------|
| Բոյավ-բուսավ Թամար ա, | Աշխարհըս |
| հէտան յէշի,           |          |
| Ունքերը կը՛ր կամար ա, | Ուրան    |
| յարին համար ա:        |          |

|                         |           |
|-------------------------|-----------|
| Յարըս մին դուք՛անդար ա, | Բոյավ     |
| բուսաթալ ջիվան,         |           |
| Օգաձս մինուճար ա,       | Ինճ սիրող |
| սիրահար ա:              |           |

Մի շարք խաղիկներում արտահատվում է աղջկա բողոքը ժամանակի սովորությունների և բարքերի հանդեպ:

Աղջիկներին հաճախ ամուսնացնում էին փոքր հասակում՝ արդեն տարիքն առած տղամարդու հետ՝ հաճախ հիմք ընդունելով տղայի հարուստ լինելը և անտեսելով նրա թերությունները:

Յարքս մին քը՛րծ ա տը՛ռալ, Յը՛ս  
սիրեցի, յազը տարավ  
Յը՛ս հալա մին կուծի խօխա: Բը՛ցած  
տըրդտ դարիբ ա

Հավառ ըրեն մալին,  
Ախճիգ՛ը տըվէն լալին:

Բայց միաժամանակ սներ տարիք չի հարցնում:

Սիրելին մը՛ծ, պուճուր չի կա, Խէլունք ա,  
սըրտը պէց ա:

Ծնողների որոշումը օրենք է աղջիկների համար, սակայն պատահում են նաև համարձակները, որոնք ընդդիմանում են այդ որոշման դեմ՝ գերադասելով ազրատ, բայց սիրամ տղային:

Հասիբ ա, հա, հասիբ ա, Կօզի  
ասիբ՛, կօզի վուչ, Էն տըզան  
ինճ նասիբ ա:

Սովորական մոտիվներից է նաև աղջկա արհամարհանքը առաջաբկություն անող տղայի հանդեպ:

Տավարը յը՛կավ շէնը, Ծըլվըլըմ  
ա դուշ ծէտը, Հարսները ընգին պէնը  
բուլբուլին նըիէտը, Զառ  
Գուդում ըս վէր սիբըմ չըմ, Այ տըղա,  
տու ինճ բաբ չըս, Լալ ա  
ընգընիմ մէր կը՛ր տը:

Նման դեպքերում տղան մնում է շվարած և ստիպված հաշտվում է իրավիճակի հետ՝ ողբալով իր վիճակը:

Յը՛ս սիրեցի, առեցիր, կամ Մէր  
արտին վը՛սկի խօփ ա, Մը՛բտըս  
Բը՛ցած տը՛ղղտ դարիբ ա

մըթեն խուրխուփ ա,

Հիշքն քը՛զ դաշանք ըրի, Վը՛ննիտ  
տակը մի քըցիլ, Մէրն ինճ  
Ըսեցիր, թա օլմագ ա:  
հէտի սօրփ ա:

Միշտ չէ, որ ամուսինները ապրում են հաշտ ու համերաշխ, երբեմն լինում են հիասթափություններ, և երիտասարդ կինը իրեն համարում է հուր-հավիտյան կորած:

Սըրտես դարդընը խօր ա, Բու անըմտ  
Ձառվարթ ա, Տօնըս ք՛օհնա չի, նօր ա, Թըլէրիտ  
էրկու վարթ ա, Բիդասըլ մարթին ծէլքէն, Հի՞նչ կանխ,  
վէր սիրածըն Հուր-հավիտյան յը՛ս կօրա: Աշկը շօր,  
կօպիտ մարթ ա:

Սիրո խաղիկներում սիրված մոտիվներից է նաև յարին տեսնելու, նրա մոտ լինելու, շուտափույթ ամուսնանալու, նրան ծաղիկ կամ խնձոր ուղարկելու, նրա կրծքին հանգչելու, նրա վրայի գարդը դառնալու, հանուն նրա կյանքը նվիրաբերելու ցանկության արտահայտությունը:

Հաճախակի են ներկայացվում սիրո վիշտն ու թախիծը, սալդաթ գրված յարի կարտը, ամուսնության խոչնդոտները: Մի քանի խաղիկներում ներկայացվում է առաջին սերը:

Հանդը քէցին հարսերը, Մարթի  
մըտա հունց ընգընի, Թա՛մուզ-թա՛մուզ վարսերը, Ուրան  
առաչի սերը:

Առանձնակի ճոխությամբ են հանդես գալիս մայրական և որդիական սերն արտահայտող երգերը, որտեղ անփոխարինելի են որդին մոր, իսկ մայրը որդու համար:

Ղարաբաղում ախ չի կա, Մօրը ջահիլը  
վէրն ա՞ Անամահչակ թաղ չի կա, Մօրը ախիլը  
վէրն ա՞ Ըշտը՛ղ շօռ կ՛աւս, հինչ տը՛նսնաւ, Մօրան  
ագիզ մարթ չի կա, Բալիք քաղցր պէն չի կա: Մօրը ախիլը  
վէրն ա:

Բազմազան ձևերով արտահայտված սիրո հետ հաճախ ներկայացվում է գյուղական աշխատանքը՝ իր տարբեր տեսակներով, և դա հասկանալի է. այդ խաղիկները հիմնականում ասել են գնդգլուհիները, իսկ նրանց սիրածները գյուղական աշխատանքին, հատկապես նրկրագործության՝ նվիրված գնեջուկ երիտասարդներ են, որոնց գովք

հաճախ գովվում է աշխատանքի գործընթացում հողը վարելիս, հունձ անելիս, թուփ թափելիս:

|                            |          |
|----------------------------|----------|
| Քրդերը թոթ ըս թափում,      | Յը՛ն քու |
| թափիչ ջանկետ մատաղ,        |          |
| Շրվեն տակեն հունձ ըս անըմ, | Յը՛ն քու |
| հինձած արտին մատաղ:        |          |

Բայց կան նաև երգեր, որոնք աշխատանքի խաղեր են միայն:

|                           |          |
|---------------------------|----------|
| Կոլխոզնիկ ա Ղարաբաղը,     | Կոլխոզին |
| թուտանընը՝                |          |
| Պենը հունց վեր օրախ խազը, | Կանանչ   |
| խլյար, կանանչ թաղը՝       |          |

Եվ այսպես, ներկայացվում է գութանը, մանը, հողը, տրակտորը, եզը, գոմեշը, ձին, ցորենը, գարին, փուշը, մացառը, անտառը, թուփը, ծառիկը, կարկուտը, ձյունը, ջուրը, առուն, բահը, մանգաղը, խորձը, խոտի դեզը, ջրաղացը, այգին, կարասը, շամամը, յեմիշը, թոնիրը, իլիկը, մածուցը, թանը, կաթը, ձուս, ոսկերիչը, հյուսնը, պատշաթը և այլն:

Բազմաթիվ խաղիկներում արծարծվում է իր հայրենիքի թեման: Արցախցին սիրում է իր հայրենիքը, սիրում է նրա քարն ու ծառը, ջուրն ու հողը, իր մանկության վայրերը, անտառները, սարերը, աղբյուրները, այն վեր է դառում ամեն մի երկրից, և ուր էլ լինի՝ հիշում է իր ծննդավայրը:

|                             |         |
|-----------------------------|---------|
| Տիգրաթի պեղուր սար ա,       | Յը՛ն    |
| աշուղ, վարդին թաղը,         |         |
| Սյուն նան կէրանը քար ա,     | Շաքի,   |
| Ծիրվան նան շարմաղը,         |         |
| Յը՛ն մը՛նիմ Տիգրաթաղ սարեն, | Թեհրանը |
| ջենյաթ էլ տը՛նա,            |         |
| Չորքալուրը անտառ ա:         |         |
| Մօռանալ չըմ Ղարաբաղը:       |         |

Մի ստվար շարք են կազմում Շուշի քաղաքին նվիրված երգերը, որը հեղինակի համար աշխարհի լավագույն քաղաքն է, ահա թե ինչու այնքան կսկիծով է ողբում նրա վիճակը:

|                             |            |
|-----------------------------|------------|
| Էն պեղուր Ղալան ա,          | Ճըբաք՛ած   |
| գ՛անքըտ հօր ա՛,             |            |
| Ջարդա ցօրեն կալտն ա,        | Խօսքմ չըս, |
| դարդըտ խօր ա,               |            |
| Չինչ քաղաք էլ վեր շօռ կ՛աւ, | Էրված,     |
| տիրտակված Շուշին,           |            |
| Լօխճան լավը Ղալան ա:        | Իմ         |
| սը՛րտըս խըրած թօր ա:        |            |

Առանձին խաղիկներում հիշատակվում են Հադրոթը, Մարտակերտը, Քերթը, Թաղավարթը, Քիրսը, Մազլը, Թարթառը, Խաչնազնուրը,

Ասկերանը, Թթու ջուրը, Շուշուանը, Շուշի լալեգ՝ ախարը և բազմաթիվ այլ վայրեր, որոնք ներկայացվում են իրենց բնությանը, գեղեցկությանը, տարբեր բարոյամտություններով:

Անհնար է խոսել արցախյան քնարական բանասիրության մասին՝ առանց դիտարկելու պանդխտության երգերը:

Դարեր շարունակ արցախահայությունը բռնել է գաղթի և պանդխտության ճանապարհը, և եթե գաղթի հիմնական պատճառը օտար զավթիչների կողմից Արցախի նվաճումն էր, ապա պանդխտությունը հիմնականում արդյունք է ազդեցական կարգերի հետևանքով ստեղծված կենսական դժվար պայմանների: Ոգևորված օտար ափերում հարստանալու գաղափարով՝ Արցախցի երիտասարդը թողնում է հարազատ վայրերը և դիմում պանդխտության: Սակայն երկար չի տևում այդ ոգևորությունը, և վրա է հասնում հիասթափությունը: Կործանված համարելով իր երիտասարդ կյանքը՝ նա փափագում է գտնել թաղվել հայրենի հողում՝ իր հարազատների կողքին:

|                                        |          |
|----------------------------------------|----------|
| Վէր մը՛նիմ, տարե՛ք՝ Շուշում թըրե՛ցեք՝, | Դե՛      |
| ջիհանամը թա կըլ՛իողանան քարըս,         |          |
| Ընդը՛ղ ա ազիգ վաթանըս, յարըս,          | Ընդը՛ղ ա |
| թաղված հըրաքօրըս, քուրըս:              |          |

Այլ խաղիկներում հանդես է գալիս պանդուխտի սիրածն, որը մնացել է անտեր, շատացել են յարի թշնամիները, սակայն նա չի կորցնում հույսը, մերժում է բոլոր առաջարկողներին՝ երազելով այն պահը, երբ սիրածը կվերադառնա և իր դուռը կբացվի:

|                                      |          |
|--------------------------------------|----------|
| Քի՛նի, կ՛ալ չըմ, կարել չըմ,          | Կ՛արունք |
| ա կ՛աւ պըրկակի,                      |          |
| Ղահրած ըմ, կ՛ալ չըմ, կարել չըմ, Պուն |          |
| կըտինի թըրջակի,                      |          |
| Չըմ տը՛ղ մին յար օնիմ,               | Վիբ կինի |
| յարըս կըլ՛ա,                         |          |
| Ուրաշու կ՛ալ չըմ, կարել չըմ:         | Իմ փակ   |
| տօտը կըթակի:                         |          |

Առավել ողբերգական է պանդուխտ որդուն տարիններ շարունակ սպասող մոր վիճակը, որը գնդնել ու հալումաշ է եղել, վառվել ու խանձվել, ինչպես հայրենի Շուշի քաղաքը, սակայն, երբ ստանում է որդու վերադարձի լուրը, աշխարհը անմիջապես փոխվում է նրա աչքերի առաջ, և սև օրերը դառնում են կարմիր՝ լցված երգ ու խաղով:

|                                  |         |
|----------------------------------|---------|
| Վէ՛յ ալան բալա, տօն յը՛ք,        | Բաղ ըմ  |
| քըցալ Ղարաբաղ,                   |         |
| Ճիբաք՛ըտ վառ ա, տօն յը՛ք,        | Նախշուն |
| աշկեր, վը՛նկ դաղ,                |         |
| Իմ սը՛րտըս էրված, խանձված, Ղարիբ |         |
| դուշըս տօն ա կ՛աւ,               |         |

Տը՛ռալ ա Ղալա, տօն յը՛ք: Կ'արմուր օրէր,  
յը՛րք նան հառ:

Մարթը խը՛լքով հալա իւակ ա: Մարթ  
ըսալը կընգանը ծօցը:

Եվ այսպէս, պանդխտության բոլոր  
ներգծում այդ նրևոյթն որակվում է որպէս մեծ  
չարիք, որը դարձրւ շարունակ ուղեկցել է ողջ  
հայությանը, ահա թե ինչու օտար ամերիկացիներ  
արգելադրեցին, զգալով իր մտաւայտութիւնը,  
իր խորհուրդն է հղում այդ դաժան ճանապարհը դնուս  
չբռնած հայրենակիցներին.

Վախը՛ւմ ըմ, թա շուտ մը՛ննիմ,  
Ղարիբօթուն մի՛ր՝ քի՛նիլ,  
Խոսկէ՛րքս պրտատ մընա, Ինձանա  
ծը՛կ խըղատ մընա:

Մի քանի խաղիկում արծարծվել է պատերազմի  
թեման.

Այս սը՛կ ա սըրտիս մէջը, Պիլիմօդը  
խաղըմ ա.  
Էս ա տը՛ռալ մէր վերջը,  
Փորիցնէրէն դաղըմա,  
Ջահիլ տըղօրցը կ'ըրեզմանը,  
Դինջացած ժողովուրդը  
Տը՛ռալ սըվըթօս կ'էրչը: Լ'օդ  
Հիտլէրէն թաղըմ ա:

Ծանր են պատերազմի թողած վերքերը,  
անտեր են մնացել արտն ու տունը, աղջիկներն ու  
կանայք, և հերոսուհին երագում է միմիայն  
խաղաղություն.

Այսմի՛զ, կընէ՛զ, լօս անմարթ, Մէյսը ըն,  
խը՛ղճ ըն բալէ՛քը,  
Մընաց անդար տօն նան արտ, Կուկում,  
նախշուն լալէ՛քը,  
Օր նան քըշէր հօքսին մաչին, Աշխարքս  
խաղաղ ինի  
Կընանէ՛քը տըղամարթ: Պակաս  
չինի հաց նան յը՛րքը:

Կան նաև ... խրատական և  
խոհափիլիսոփայական խաղիկներ, որոնք  
ներկայացվում է աշխարհի անցողիկությունը,  
մարդկանց ազատությունը, կարծամտությունը,  
պախարակվում անբարոյականությունը, չգրված  
սուրբ օրենքների ուսմահարումը.

Մարթ միշտ աշկը ծակ ա, Նալը  
քըցիմ քըթօցը,  
Ամեն օր տուրքօակ ա, Յէր Կինի  
զընգզընգօցը,  
Մընէլիս պէն չի տանել, Յը՛ս  
տը՛սալ չըմ, թա նի մըննէ:

Խոսկելով ժողովրդական խաղիկների մասին  
Աբեղյանը գրում է.

- Ի՞նչ հորինվածք կամ արվեստ կարելի է  
ստանալ մի նրբից, որ ընդամենը նրկու, նրկս կամ չորս  
տող է, և որի հեղինակը չի էլ մտածել. թե ինքը բան է  
հորինում, այլ իբրև մի թոչուն՝ նրգել է շրջապատի կամ  
դեպքի ազդեցության տակ: Այս պատճառով  
խաղիկների մեծ մասը պարզ և անպաճույճ խոսք ու  
խնդիր է:

Մակայն պետք է նշել, որ արգելադրյալ  
խաղիկները ունեն գեղարվեստական բազմաթիվ  
արժանիքներ: Դրանք բաղկացած են նրկու մասից  
բնության պատկերի և քնարական պատկերի  
զուգահեռումից, որոնցից առաջինը դառնում է նրկորդի  
փոխաբերական արտահայտության միջոցը, ինչպես.

Մեր տըռանը խընգի ծառ, Էս գ'իրազի  
քը՛կ մօխլաթ,  
Նախշուն բուլբուլ յըրան թառ, Էն գ'իրազի  
յը՛ք ինձ տար:

Խաղիկներից առանձին փայլ են հաղորդում  
գործածված մակդիրները, որոնք մի կողմից  
նկարագրում են հերոսի արտաքինը, մյուս կողմից՝ նրա  
հոգեկան ապրումները, ցավն ու վիշտը: Հաճախակի  
հանդիպող մակդիրներից են՝ քախծը յար, վը՛սկի թվ,  
չօղ կարումս, սը՛կ սը՛րտ, փիչալա աշկը, թառան դուշ,  
ըրծաթէ բանդէր, կ'արմուր օրէր, կամար օնքէր,  
շամամ, կուկում ծըծէր, արը՛կ ռանգ՛, սը՛կ-սը՛կ օրէր,  
մըթէն սը՛րտ, բուլբուլ լուգու, չինար թօյ:

Հաճախակի են հանդիպում նաև  
համեմատություններ. Լուգուտ օտիմ, հանց ա դանդ,  
Յը՛ս մին կանանչ խըլար ըմ, Յարքս սափարի յա,  
Խօսկէրքը շաքարի յա, Լ'օտկատեղը շինաւա ա, յարքս  
մին քը՛րձ ա, Հանց ա պէզված վարթ:

Իրենց խոսքը արտահայտիչ դարձնելու  
համար հերոսները հաճախակի են դիմել  
ժողովրդական դարձվածներին. աշկը շօր, սը՛րտըն ու  
թօրը էրիլ, սը՛րտը դարդըմ խըրվէլ, տէփը ճըղած դավալ,  
դուշը ծեքան թըըշիլ, քը՛րձ տը՛ննալ, օրը տարէ ընցընէլ,  
սըրէն առնը կօտրէլ, դափագա ընգած դուշ, դուշը  
կըլխէն թառ անէլ, գ'ուլը աշըմիշ ինիլ, քըթէն ծօլը յը  
ինիլ, փընթի մէյմուն, սըրտըմը արը՛կ տուս կ'ալ, սը՛րտը  
սըրտէն մաչին քամէլ:

Մի շարք ներգծում հանդիպում ենք  
անծնթենիք, որոնք ասվում են և՛ սիրածի, և՛ նրա  
ծնողների, և՛ դուշմանի՝ սերը խափանողի հասցենին,  
ինչպես. Խաղաղ տը՛նա բայաթի, ագիզըտ մը՛ննէ այ  
այսմի՛զ, մէշկը կօտրի քու մօր, փիս հանօրը աշկը տուս  
կ'ա, դուշմանին աշկը տուս կ'ա, Աստուծ ալէնտ վէշ  
հաճօղա, հու ինձ պըմբասէ, նա վէշ խօլսա խըլտրտէ, հու  
իմ սիրածը տա վէշ, կարօտ մընա սը՛կ հացի, քօլտ

Քաղաքի և տեղերի, տոն քանդող, տոնըտ քանդվի, վեշ ընդնէ զխնամ վը՛ղը:

Աննծքնեղին գուգընթաց գործածվում են զորհանքներ և բարեմաղթանքներ. որոնց հեղինակը հիմնականում ներիտասարդ աղջիկներն ու հարսներն են. մեր տոնը կ'ալիտ մատաղ, մըլլօրած ճընապին մատաղ, բու կարքիտ մատաղ տներուն, Մարասը քյգ քօմագ՛ ինի, թօրքս թօքատ տամ, շօխկըտ պլմբախվա՛վ վըհաքիմ և այլն:

Արցախցու խոսքը դժվար է պատկերացնել առանց առած նասացվածքների, որոնք տեղ են գտել նաև խաղիկներում. սիրելին մըժ ու պուճուր չի կա, ց'անքը մին բախտի խաղ ա, ըստուծէն քարավ չըն տալ, կ'արմուր խընծօրէն քարավ տըվօղ շատ կինի, խըղճ ք'ափուրը անդար չինի, առանց կընեգ տօնը վըրան ա:

Արցախահայ բարբառը հարուստ է փոխառյալ բառերով, որոնք շնայլորեն գործարծվել են նաև խաղիկներում: Մակայն այստեղ հիմնականում հանդես են գալիս արևելյան լեզուներից փոխառյալ բառերը, մինչդեռ բարբառում այնքան առատ ռուսերեն բառերը հանդիպում են հազվադեպ: Թերևս այն է պատճառը, որ խաղիկների մեծ մասը հորինվել են նախքան ռուսերենի հետ չփուլը, մյուս կողմից՝ խաղիկների, ինչպես և ժողովրդական մյուս ներգրի լեզուն արևելյանն է, և ռուսերեն բառերը հարիր չեն այդ լեզվին:

Այնուամենայնիվ, արևելյան լեզուներից փոխառյալ բազմաթիվ բառերի հետ գործածվել են ռուսերենից անցած որոշ բառեր, ինչպես կրկուրնի, ծըվլտոնիկ, սալլաթ, սըմավաթ, կանփետ, շագալաթ, սորակտոր:

Ժողովրդական խաղիկների հիմնական ձևը քառատողն է: Հայ բանահյուսությանը հատուկ ներկուող և նոստող խաղիկներ այստեղ չկան: Ըստ վանկերի թվի և հանգների դասավորության՝ խաղիկներն ունեն բազմազանություն: Չորս վանկից թիչ վանկեր ունեցող տողեր հազվադեպ են հանդիպում: Թիչ գործածական են նաև չորս և հինգ վանկանի տողերը, որոնք հանդես են գալիս այլ՝ հատկապես վնց և յոթ վանկանի տողերի հետ.

Հավաք լրէն մալին (6)      Կըռը՛վը  
ընգալ ա, (6)  
Ախնիգ՛ը տըվէն լալին (7)      Հացը  
ընգալ ա, (5)  
Մալը քը՛ցալ, (4)      Բըզարին  
մէլին (5)  
Ախնիգ՛ը մընաց լալին (7)  
Կախաղանը տընգալ ա (7):

Վնց վանկանի տողերը քաղականներ են կազմում այլ՝ հիմնականում յոթ և ութ վանկանի տողերի հետ, ինչպես նաև առանձին.

Հափը կ'աւա, հափը կ'աւա, (6)      Նըստըմ  
ըմ, քար չի կա, (6)  
Մընժ զըզդանէն քափը կ'աւա, (7)      Էրվըմ ըմ.  
ճար չի կա, (6)  
Ա՛ ինժ աւօղ, յը՛տ տը՛նօղ (7)      Հուր ը՛մ  
յընս հինչ ըրալ, (6)  
Բօզ ծիյանը տուս տափը կ'աւա (8)      Բաղ  
օնիմ, բար չի կա: (6)

Առավել տարածված են յոթ և ութ վանկանի տողերով ներգրեր: Նման տողերը քառատողեր են կազմում առանձին, համատեղ և այլ վանկանի տողերի հետ.

Տանձի ծառը ծըռվալ ա, (7)      Կ'արունքը  
մըղըկալալ ա (8),  
Յարքս սալդաթ կ'իրվալ ա, (7)      Տէրմանը  
շըղըկալալ ա (8),  
Յար ցան, սալդաթ մի ք'ինիլ (7)      Հու  
կըտանէ, հու կըպիրի (8),  
Սը՛րտըս դարըմ խըրվալ ա (7)  
Վը՛խնարը շըղըկալալ ա (8):

Մարալ ա, հա մարալ ա, (7)  
Մարալօթունը հիչ կանին, (8)  
Էս խսնիգ՛ը մարալ ա, (7)      Դուշմանը  
բախտը տարալ ա (8):

Պատահում են նաև 9, 10, 11, 12 և նույնիսկ 15 վանկանի տողեր, որոնք, սակայն, հազվադեպ են: Սովորաբար հանգավորվում են առաջին, նրկորդ, չորրորդ տողերը, իսկ ներքուրդ տողը մնում է անհանգ: Որոշ խաղիկներում իրար հետ հանգավորվում են առաջին և նրկորդ, ներքուրդ և չորրորդ տողերը.

Մէր արտըմը հօնժ կանիմ,      Իրիր՛նակը  
հուրիտարտըմ ա,  
Չինըս կօտրէ, հո՞ւնց կանիմ,      Լազգ՛ին  
շէնըմ սըրքպատըմ ա,  
Վէր իմ յարքս կօշտըս կ'ա,      Վը՛նննըրտ  
տիր ծիյին դալին,  
Պա էն վախտը հո՞ւնց կանիմ:      Օշըտ      տիր  
զըզըլաշին:

Հա՛րէ, հա՛րէ, այ խընը՛ցէ,      Ղօնաղ      ա  
յը՛կալ, տը՛ղ չի կա,  
Մաչըտ պարի, այ խընը՛ցէ,      Խաչիլ      ըմ  
իփալ, յը՛ղ չի կա:

Մի քանի քառատողեր էլ ունեն անհանգ տողեր, որոնք հավանաբար աղճատումներ են, այդտեղ հանգավորվում են միայն առաջին և նրկորդ կամ նրկորդ և չորրորդ տողերը.

Մագերըտ գառ նան խառ ա, Պըռոշնիտ  
 վարթի թեր ա,  
 Ման կ'ալըտ էխշընագ ա, Մերը կօտի  
 սըվերը,  
 Շուտ րրա, յէք իմ կօշտըս, Հիշքան  
 ճօկիս, ճըկճօկիս,  
 Սըրտիս նըհէտ քախձըր խօսի: Յըէս ըմ  
 քու նագիտ տէրը:

# Резюме

В данной статье автор представляет арцахские народные песни, анализируя содержащиеся в них различные мотивы.

Одновременно исследуются художественновыразительные средства и особенности стихосложения этих песен.

Արցախյան խաղիկներում հանգները բաց են ու քողարկված, ինչպես.

Բաց վանկեր-վանի-խանի-հանի, մաղըմ-աղըմ-թաղըմ, մօշի-յէշի-օրիշի, մըտանի-ծիրանի-կըհանի.

Քողարկված վանկեր-ալէն անի-տէն անի-սէր անի, վար անի-տար անի-սար անի, թէգ ա քի՛նըմ-տէս ա քի՛նըմ-կէս ա քի՛նըմ:

Պնտը է ասել նաև, որ որոշ խաղիկներում կան աղավաղումներ: Հանապատրաստից ստեղծվով քառատողեր՝ հերոսները նրբեմն հանգավորման նպատակով գործածել են բարբառային ոչ հստակ, աղավաղված ձևեր, անգործածական գրական ու փոխառյալ բառեր.

Չօլնը՛ր հանդէր ա, Զարին  
 տակը խօր ծօր ա,  
 Լօխ ըրձաթէ բանդեր ա, Բըրքարօտ  
 հըղէ յա, ծօր ա,  
 Յար շուտ ըրա, յը՛տ տը՛ռ, յը՛ք, Յարիս  
 ըսը՛ցէք՝ միշտ հիշի  
 Նըշանածըտ անդը՛ր ա:  
 Կըըքմէրըմ յէս կօրա:

Այստեղ գործածված անդըր բառի փոխարեն պնտը է լինել անդար, իսկ կօրա բառի փոխարեն՝ կօրէ, որոնք սակայն հանգեր չէին ստեղծի:

Այսպիսով, Արցախյան ժողովրդական խաղիկները կատարյալ են ոչ միայն իրենց բովանդակությամբ, այլև լեզվական արվեստով, այլ կերպ առած՝ կազմում են ձևի և բովանդակության միասնություն:

## Ազգագրություն և բանահյուսություն

Արցախյան ժողովրդական խաղիկները և նրանց լեզվական արվեստը

### Ընկրտում

Սույն հոդվածում հեղինակը ներկայացնում է արցախյան ժողովրդական խաղիկները, վերլուծում նրանց գաղափարական մոտիվները: Միաժամանակ ներկայացվում են խաղիկների լեզվաարտահայտչական միջոցները և տաղաչափական առանձնահատկությունները:

Арцахские народные песни и культура их языка.

А.Ю.Саркисян